ՀՏԴ:929: 947.925 Վարդումյան + 398.22

Doi:10.54503/0135-0536-2025.1-318

ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*

Պատմաբան, ազգագրագետ, մշակութաբան Գոհար Վարդումյանը հայագիտության այն ներկայացուցիչներից է, որի գիտական ու մանկավարժական կենսագրությունը բազմազան է և արգասաբեր: Շուրջ կեսդարյա իր գործունեության ընթացքում զբաղվում է տարաբնույթ խնդիրների ուսումնասիրությամբ՝ խորանալով հատկապես հայոց և համաշխարհային քաղաքակրթական արժեքների հետազոտության մեջ:

Գ. Վարդումյանը ծնվել է 1950 թ. փետրվարի 13-ին Երևանում: Դպրոցն ավարտելով 1967 թ. մեդալով՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլիական բաժինը: Սակայն ընտրեց հայագիտությունը, քանզի հայրը՝ Դերենիկ Վարդումյանը, որն իրավամբ համարվում է արդի հայ ազգագրության նահապետը, մեծ սեր էր ներշնչել դստերը պատմագիտության այս ճյուղի նկատմամբ: 1973 թ. Գոհարն ընդունվեց Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ազգագրության ամբիոն՝ որպես նպատակային ասպիրանտ: Թեկնածուական ատենախոսության խորագիրն էր «Հայոց նախաքրիստոնեական աստվածների պաշտամունքը (պատմազգագրական ուսումնասիրություն)»:

Մոսկովյան միջավայրում Գ. Վարդումյանը ձեռք բերեց հարուստ գիտելիքներ աշխարհի ժողովուրդների ազգագրության ասպարեզում, ծանոթացավ ժամանակի առաջատար մասնագետների՝ Ս. Ա. Տոկարևի, Ս. Ա. Հարությունովի, Ս. Ի. Բրուկի և այլոց հետ: Ուսումնառության ընթացքում՝ 1972–1975 թթ., համալսարանի գիտական հանդեսներում հրատարակեց առաջին հոդվածները՝ նվիրված հին հայոց դիցարանին: Ամառները վերադառնում էր Երևան ու մասնակցում Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտարշավներին, որոնց ընթացքում Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Ջավախք պատմազգագրական մարզերում դաշտային նյութեր հավաքեց ժողովրդական հավատալիքների, ավանդական ծեսերի, սովորույթների վերաբերյալ:

1976 թ. Գ. Վարդումյանն աշխատանքի է անցնում ԳԱ պատմության ինստիտուտի Հին դարերի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Բաժինը ղեկավարում էր ակադեմիկոս Սուրեն Երեմյանը, որից նույնպես սովորելու շատ բան ուներ: Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքի խնդիրներում խորանալուն զուգահեռ՝ հարստացնում է գիտելիքները հին շրջանի պատմության այլ ոլորտներում ևս, որոնց շնորհիվ ամբողջացնում է ատենախոսությունը և

---

* *Ներկայացվել է 08. II. 2025 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:*

1983 թ. հաջողությամբ պաշտպանում Մոսկվայում՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1991 թ. ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 18-րդ պրակում լույս է տեսնում նրա «Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքը» մենագրությունը (ռուսերեն), որում ներկայացված են հին հայոց դիցապաշտական համակարգի պատմական փուլերն ըստ իրարահաջորդ դարաշրջանների: Գիրքը հագեցած է պատկերներով և պաշտամունքային վայրերի քարտեզով: Հեղինակի այս և հետագա բոլոր ուսումնասիրություններում սկզբնաղբյուր են ծառայել հնագիտական, լեզվական, բանահյուսական, մատենագրական, ազգագրական տարաբնույթ նյութեր:

Պատմության ինստիտուտում է կայանում Գ. Վարդումյանի հետագա գիտական վերելքը, որտեղ էլ տարիների ընթացքում դառնում է առաջատար գիտաշխատող՝ միշտ հավատարիմ մնալով իր հիմնական բնագավառին, բայց նաև մեծապես ընդլայնելով ուսումնասիրության շրջանակը: Նրա հետաքրքրությունները բազմազան են՝ ներառում են հայոց ազգածագման և հին պատմության, բազմահազարամյա հայ մշակույթի և հոգևոր արժեհամակարգի, հեթանոսության և քրիստոնեության փոխհարաբերությունների, ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում հայոց պետականության ու ազգային արժեքների ճանաչման, պահպանման և հարակից շատ խնդիրներ: Իր գիտական որոնումների արդյունքում հրատարակել է մոտ 150 աշխատություն, այդ թվում՝ մենագրություն, ուսումնական ձեռնարկ, հոդված, գրախոսություն և այլն: Զեկուցումներով բազմիցս հանդես է եկել Հայաստանի Հանրապետության, Արցախի և արտերկրի բուհական, հանրապետական ու միջազգային գիտական միջոցառումներում: Հրավիրվել է մասնակցելու գիտաժողովների՝ Վրաստան, Հունաստան, Ռուսաստան, Չինաստան և այլուր, որոնց զեկուցումները տպագրվել են ռուսերեն, անգլերեն, չինարեն: Ղեկավարել և ընդդիմախոսել է թեզեր ու ատենախոսություններ, եղույթ ունեցել ռադիո-հեռուստատեսային և համացանցային լրատվամիջոցներով:

Գ. Վարդումյանի գլխավոր ավանդը հին հայոց հավատալիքների և դիցապաշտական համակարգի պատմական փուլերի պարբերացումն է, ինչն ակնառու է արդեն 1977 թ. ՀԽՍՀ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում հրատարակած «Հին հայկական դիցարանի համակարգումը» հոդվածում (№ 8, էջ 68–77): Քննության է առել դիցաբանական պատկերացումների և պաշտամունքի զանազան դրսևորումներ, ինչպես, օրինակ՝ «Հայոց լուսարեւային պատկերացումները. ըստ ժայռապատկերների եւ ազգագրական նիւթերի» [«Բազմավէպ» (Վենետիկ), 2002, թիւ 1–4, էջ 383–407, համահեղ.՝ Կ. Թոխատյան], «Պաշտամունքները և հավատալիքները Այրարատ աշխարհում» («Երևանի պատմության թանգարանի գիտաժողովի նյութեր», 2006, էջ 224–239), «Բնապաշտության դրսևորումները Մովսես Խորենացու և Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործություններում» (Հր. Աճառյանի անվան համալսարան, 2007, էջ 113–123): Պաշտամունքային վայրերի քարտեզագրմանն են նվիրված մի շարք հոդվածներ, իսկ մենագրության մեջ և այլ աշխատություններում առկա են իր կազմած քարտեզները տարբեր լեզուներով, օրինակ՝ «Հին հայոց կրոնապաշտամունքային համակարգի քարտեզավորման որոշ հարցեր» [«Բանբեր հայագիտության» (Երևան), 2017, № 2, էջ 76–87, անգլերեն]:

Արտերկրի որոշ կարևոր հրատարակություններում նա հեղինակել է հայոց հին կրոնին և դիցաբանությանը նվիրված բաժինները. օրինակ՝ իսպաներեն «Հայ ժողովրդի պատմություն» գրքում (Բարսելոն, 2010, էջ 431–435): Ռուսաստանի Դաշնության ԳԱ Ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի

«Ժողովուրդներ և մշակույթներ» մատենաշարի «Հայեր» հատորում գրել է «Նախաքրիստոնեական դիցարան» բաժինը (Մոսկվա, 2012, էջ 364–371):

Գ. Վարդումյանին մեծապես հետաքրքրում են նաև քրիստոնեության մեջ հին հավատալիքների վերապրուկների հարցերը, որոնց հետազոտությանն են նվիրված «Վաղ միջնադարեան Հայաստանի հոգեւոր մշակոյթը. հեթանոսութիւնից դեպի քրիստոնեութիւն» («Բազմավէպ», 2010–2011, թիւ 1–2, էջ 279–307), «Հայոց հին հավատքի անդրադարձները ներկայիս ժողովրդական տոնակարգում» (Վ. Բրյուսովի անվան համալսարան, «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ», Երևան, 2014, էջ 256–264), «Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները հայոց տոնական կյանքում» (ՊԲՀ, 2020, № 1, էջ 163–186) և այլն:

Պատանեկության տարիներից տարված էր տիեզերքով՝ երազելով աստղագետ դառնալ, և, գուցե երկնային, խորհրդավորի հանդեպ սերն էր, որ արթնացրեց դիցաբանությամբ զբաղվելու ձգտումը: Իրարահյուս այս թեմաներով զեկուցել է Բյուրականյան գիտաժողովներում «Տիեզերքը հայոց դիցաբանական պատկերացումներում» («Մշակութային աստղագիտությունը Հայկական լեռնաշխարհում», 2016, էջ 156–165), «Երկինքը և երկիրը հին հայոց դիցաբանության մեջ» («Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ», 2024, էջ 126–145, անգլերեն), «Շիրակացին և «հեթանոս» գիտնականները» («Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում», 2014, էջ 134–141):

Գ. Վարդումյանի հետազոտությունների կիզակետում են նաև Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոցում» վկայված պատումները Հայկյանների մասին, որոնք նա համարում է վաղնջական էպոսի դրվագներ և դրանցում տեսնում պետականության հիմնադրման դիցապատմական արտացոլումը: Նրա ուսումնասիրության ծիրում է «Սասնա Ծռեր» էպոսի ակունքների խնդիրը, որոնք տեսնում է հեթանոսական դարաշրջանի բնապաշտական աշխարհում:

Ցեղասպանության 100-ամյակի օրերին Գ. Վարդումյանը հանդես եկավ մշակութակործան եղեռնի, հայոց ինքնության և էթնիկ հիշողության մասին հոդվածներով, որոնք հրատարակվեցին ակադեմիական և բուհական հանդեսներում: Նրա հետաքրքրության շրջանակում էին նաև արդի ժամանակներում հայոց ազգային արժեքներին և հայ հասարակությանն առնչվող հարցերը:

Երկար տարիներ դասավանդելով Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում՝ Գ. Վարդումյանն անդրադարձել է ռուս գրողի՝ Հայաստանի պատմության և մշակույթի ընկալումներին: Առհասարակ, այստեղ աշխատելու շուրջ 30 տարիների ընթացքում զանազան գիտական թեմաներով է հանդես եկել, որոնք լույս են տեսել համալսարանի «Բանբեր» և «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» պարբերականներում:

Գ. Վարդումյանը երբեք չի սահմանափակվել միայն իր մասնագիտական թեմայով, այլ միշտ հետաքրքրվել է աշխարհի քաղաքակրթական արժեհամակարգերով և մշակութային գործընթացներով: Նրա ուշադրությունից չի վրիպել այնպիսի ինքնատիպ պատմական երևույթ, որպիսին Մետաքսի ճանապարհն էր, որի հարավային ճյուղն անցել է Հայաստանով դեռևս Արտաշես Ա և Տիգրան Մեծ արքաների օրոք: Աշխարհաքաղաքական ներկա փուլում Չինաստանում զանազան միջոցառումներ են արվում առևտրային այդ բանուկ ուղու նորովի գործելուն միտված, որոնց համատեքստում Համաշխարհային վեհաժողովին (2018 թ.) և գիտաժողովին (2019 թ.) հրավիրվելով, Պեկինում և Դունհուանում հանդես է եկել ելույթներով՝ նվիրված Հայաստանի մշակութային դերին Մետաքսի ճանապարհին:

Միջազգային գիտական շտեմարաններ (ՄԳՇ) վարկանիշով “Stratum Plus” *հանդեսում Վարդումյանն ունի հոդվածներ, նվիրված դիցաբանական պատկերների արտացոլմանը հին հայկական դրամներում (Սանկտ-Պետերբուրգ-Քիշինև-Օդեսա-Բուխարեստ, 2018, № 6, էջ 135–147) և էպիկական Ծովինարի կերպարի ծագման ու զարգացման հարցերին (2024, № 5, էջ 345–357, համահեղ.՝ Կ. Թոխաթյան), երկուսն էլ ռուսերեն:*

Աճող սերնդին ազգային ոգով և աշխարհաքաղաքացու ունակություններով կրթելու իր ձգտումին հավատարիմ՝ նա տարիներ շարունակ դասավանդել է ՀՀ բուհերում: Մանկավարժական գործունեությունը սկսելով Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից (1991–2002 թթ.), 2003–2018 թթ.՝ Երևանի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ մագիստրատուրայում:

2000 թ. ի վեր Գ. Վարդումյանը դասավանդում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, որտեղ էլ ստացել է դոցենտի գիտական կոչում՝ հեղինակելով «Կրոնների պատմություն. Հին կրոններ» բուհական ուսումնական ձեռնարկը (Երևան, 2006, համահեղ.՝ Ե. Մարգարյան): Մշակել է մի շարք նոր դասընթացներ:

Գ. Վարդումյանը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Վ. Բրյուսովի անվան համալսարանի գիտական խորհուրդների անդամ է:

Նա հարգանքի տուրք է մատուցել հայագիտության երախտավորների՝ Հակոբ Մանանդյանի 150-ամյա, Դերենիկ Վարդումյանի և Սիմոն Կրկյաշարյանի 100-ամյա հոբելյանների առթիվ՝ հոդվածներ հրատարակելով նրանց հիշատակին:

Նշանակալի է Վարդումյանի ավանդը Պատմության ինստիտուտում հրատարակվող «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի աշխատանքներում: 2019 թ. ընտրվելով ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ՝ ձեռամուխ եղավ առաջին հատորի երկրորդ գրքի խմբագրական գործը կազմակերպելու և իրականացնելու աշխատանքներում: Նրա և բաժնի աշխատակիցների եռանդուն ջանքերը հաջողության հասան, և 2024 թ. լույս տեսավ երկար սպասված հատորը, որը ներառում է Վանի թագավորությունից մինչև քրիստոնեություն ընդունելու պատմական ծավալուն ժամանակաշրջանը: Նա ոչ միայն խմբագրակազմում է, այլև հեղինակն է «IV դարի մշակույթը» (հ. II, գիրք առաջին, Միջին դարեր, IV դարի սկիզբ – IX դարի կես, Երևան, 2018), «Հավատալիքները և պաշտամունքը» բաժինների (էջ 575–597), Բաբկեն Առաքելյանի համահեղինակությամբ՝ «Վիպական շարքը» (հ. I, գիրք երկրորդ, Հին դարեր, Ք.ա. IX դար – Ք.հ. III դար, էջ 602–613) բաժնում:

Գոհար Վարդումյանն այսօր էլ աշխատում է Պատմության ինստիտուտում, հրատարակության է պատրաստում տարիների աշխատանքը՝ նվիրված հին Հայաստանի դիցապաշտական համակարգերի պատմական փուլերին և առանձնահատկություններին: Անսպառ նվիրումով շարունակում է դասավանդել Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում: Մաղթում ենք Գոհար Վարդումյանին երկար տարիների եռանդուն աշխատանք և նորանոր գիտական ու մանկավարժական նվաճումներ:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Պատմության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ պատմական ժողովրդագրություն, Հայոց ցեղասպանություն, Արևմտյան Հայաստանի պատմություն, Հայոց պետականության պատմություն: Հեղինակ է 18 մենագրության և շուրջ 450 հոդվածի:
ORCID:0000-0002-2579-0286. ashamelk@yahoo.com